Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԻՍԿ ՍԱ ՎԱՐԿԱ՞Ծ Է, ԹԵ...

... Հարցի պատմությունն սկսվեց բոլորովին վերջերս, 1921 թվականին։ Այդ թվականի գարնանը անգլիացի բևեռախույզ Հովարդ Բյուրի գլխավորած գիտական արշավախումբը ճանապարհ ընկավ դեպի Էվերեստի լեռնաշղթան, նրա ամենաբարձր գագաթի՝ Ջոմոլունգմայի շրջակայքում գիտական հետազոտություններ կատարելու համար։ Այստեղ էլ, շուրջ ութ հազար մետր բարձրության վրա, հավերժական ու անխաթար ձյան վրա Բյուրը... ներբանների տարօրինակ հետքեր հայտնաբերեց։ Դրանք պարզորոշ էին, հստակ, շատ նման էին մարդու մերկ ոտքերի ոտնատեղերին։ Որոշակիորեն դրոշմված էին կրունկները, ոտնամատները, բթամատը, որը փոքր-ինչ հեռացած էր մյուսներից, բայց այդ բոլորը չափազանց տձև էին ու շատ մեծ։ Չափելով ոտնահետքի՝ ձյան մեջ խրվածության աստիճանը և նրա մեծությունը, Բյուրը հաշվարկներով ապացուցեց, որ այդպիսի ոտնահետքեր ունեցող արարածը կշռել է մոտ 150 կիլոգրամ, ունեցել է մինչև երկու մետրանոց հասակ և տեղից տեղ է փոխադրվել ոստյունանման քայլերով։ Արշավախմբի անդամների՝ այս կապակցությամբ կատարված հարցուփորձերը էլ ավելի զարմանալի փաստեր հայտնաբերեցին։ Էվերեստի ստորոտում ապրող բնակիչները հաստատեցին, որ իրոք, սարի անհասանելի ու անմատչելի կիրճերում ապրում են վիթխարահասակ մարդանման արարածներ, որոնք, սակայն, գաղտնակյաց կյանք են վարում, շրջագայության են դուրս գալիս հիմնականում գիշերային ժամերին և, ընդհանրապես, խուսափում են մարդկանց հետ հանդիպելուց։ Պարզվեց նաև, որ Էվերեստի ստորոտում ապրող բնակիչների թվում քիչ չեն եղել մարդիկ, որոնք պատահաբար տեսել են նրանց։

Ականատեսների վկայությունները, որոնք իսկույն գրի առան Բյուրի արշավախմբի անդամները, հիմնականում լրացնում էին իրար։ Պարզվեց, որ «Դեյտին» (այդպես էին կոչում նրան տեղացիները) ունենում էր երբեմն մինչև երեք մետր բարձրություն, հիմնականում կարմրաշիկավուն մազածածկույթ ուներ, թեև երբեմն հանդիպում էին նաև թուխ ծածկույթ ունեցողները։ Նրանք քայլում էին մեծ մասամբ

ուղղահայաց դիրքով, իհարկե չխորշելով նաև չորեքթաթ քայլվածքից։ Դեմքը, ըստ ականատեսների, մարդու և կապիկի դեմքերի խառնուրդ էր, մազածածկ էր, ուներ մոտիկ տեղադրված՝ սուր և չար հայացքով աչքեր, որոնք ահարկու տպավորություն էին թողնում։ «Դեյտին» շատ զգուշավոր էր, ամենափոքր կասկածահարույց առիթից անհապաղ փախուստի էր դիմում, որը ուղեկցվում էր սուր, ականջ ծակող սուլոցով։

Հովարդ Բյուրի կատարած՝ վերոհիշյալ ոտնահետքերի լուսանկարները և տեղաբնակների պատմածների գրառումները, որոնք նա հրատարակեց գիտական ամսագրում, աշխարհում մտքերի փոթորիկ հարուցեցին։ Նախ, պարզվեց, որ «Ձյունների մարդուն» (այսպես անվանեց իր «հայտնաբերած» արարածին Բյուրը) տեսել էին ոչ միայն Էվերեստի ու նրան շրջապատող լեռների շրջանում, այլև Հյուսիսային Չինաստանում, Կոլայի թերակղզու ձյունապատ տարածքներում, Հյուսիսային Ամերիկայի խաղաղօվկիանոսյան ափի բարձրադիր լեռներում, Կանադայի հյուսիսում և անգամ Կովկասյան լեռներում, և հանդիպել էին երբեմն 4-5 «հոգուց» բաղկացած խմբերով։ Ականատեսների վկայությունները, ինչպես և նախորդ դեպքում, իրենց մեկ-երկու տարբերություններով, հիմնականում լրացնում էին իրար։

Երկրորդ համաշխարհային պատերազմը և նրան հաջորդած ծանր տարիները թույլ չտվեցին շարունակել այս բնույթի որոնումները։ Եվ միայն 1967 թվականին երկու ամերիկացի բևեռախույզներ՝ Ռոջեր Պատերսոնը և Ռոբերտ Հիմլինը, իրենց բառերով ասած՝ «մաղով անց կացրեցին» ամբողջ Էվերեստի շրջակայքը, սակայն ոչինչ չգտան և հայտարարեցին, որ «Ձյունների մարդու մասին ասվածը դատարկ խոսակցություն է»։ Նրանք նույնիսկ ապացուցեցին իրենց հայտարարությունը՝ «Ամիսներ շարունակ տևող՝ շուրջ քառասուն աստիճան կայուն սառնամանիքի դեպքում ոչ մի կենդանի օրգանիզմ, այն էլ՝ բոբիկ, իր գոյությունը պահպանել չի կարող»։ Սակայն այդ նույն թվականին Կոլա թերակղզու հյուսիսում՝ Իմադրա լճի ափին գտնվող պիոներական ճամբարի երեխաները պատմեցին «Կոմսոմոլսկայա պրավդայի» թղթակիցներին, որ իրենք հանդիպել են «Ձյունների մարդուն» և այն էլ մի քանի անգամ։ «Նա առանց խտրության ուտում էր այն բոլոր մնացորդները, որոնք որպես ավելցուկ մենք թափել էինք ճամբարից հեռու գտնվող բացատում։ Բարձրահասակ էր, ամբողջ մեջքը, թիկունքը, ձեռքերն ու ոտքերը ծածկված

էին շիկավուն, թավ մազերով, իսկ փորի վրա և պարանոցին մազ գրեթե չկար։ Հետո նա նկատեց մեզ, մի պահ նայեց իր չար, կատաղի աչքերով ու փախավ՝ ականջ ծակող սուլոց արձակելով։ Մենք շատ վախեցանք»։

«Այդ հանելուկային երկոտանու գոյությունը պետք է միայն վարկած համարել» գրում էր բելգիացի գիտնական Բյորնստ Էյվելմանսը։ «Ես նրան տեսա իմ աչքերով, – գրում է ԱՊՆ-ի թղթակից Մ.Գրիգունովան, – նա իր գալուստն ազդարարեց գիշերվա ժամը 3-ին՝ քարեր նետելով մեր տնակի վրա։ Հետո մոտեցավ, բարձրացավ տանիքը, մի քանի անգամ ցատկոտեց, ասես տանիքի ամրությունն էր փորձում, հետո թռավ գետնին, երկու անգամ վազքով պտտվեց մեր տնակի շուրջը։ Այդ ժամանակ էլ ես տեսա նրա անմազ դեմքը։ Խոստովանում եմ՝ սարսափելի էր։ Նրա հասակը, իմ հաշվարկներով, կլիներ մոտ երեք մետր»։

Համանման փաստեր, փոքրիկ բարեկամ, կարելի է էլի բերել, ասենք դու էլ մեր թերթերում ու ամսագրերում երևի կարդացել ես այդ մասին։ Եվ արդեն քանի տարի է, որ աշխարհի բոլոր գիտնականները տալիս են միևնույն հարցը. գոյություն ունի՞ թե ոչ այս հանելուկային «Ձյունների մարդը»։ Եվ եթե այո, ապա ի՞նչ է ներկայացնում իրենից։ Կապիկների դասի ներկայացուցի՞չ է, թե գիտությանն առ այսօր անհայտ կապկանմանների մի նոր տեսակ։ Պատահակա՞ն է արդյոք, որ նա բնակվում է հավերժական ձյունների ու սառնամանիքների գոտում և ո՞րն է դրա պատճառը։

Այս և այսպիսի բազում հարցեր առ այսօր սպասում են իրենց պատասխանին։

Պիոներ կանչ, 1992, № 87, մայիսի 7